ԺԲ. Հրաւէր ժողովրդոց Շամախւոյ թեմի, տպած 1893 թուին, Բաղու։

ԺԴ. Իսկ լրագրական յօդուածներ, գրուածներ և այլն, հաբիւրաւոր, սկսած 1860 թուէն, զանազան առարկայից վերաբերութեամբ այլ և այլ լրագրաց մէջ տպած զոր օրինակ՝ Համբաւաբեր Ռուսիոյ, Ճռաքաղ, Արարատ ամսագիր և այլն։

ԺԴ. Իսկ իմ պաշտօնական տօմարիս երեւում է, որ յընթացս քսան և չորս տարուայ (1872 1896) եպիսկոպոսութեանս՝ հրամանաւ երջանկայիշատակ Ս. Գէորգ, Մակար և Մկրտիչ կաթուղիկոսաց և առաւելապէս Սինոդի Ս. Էջմիածնի, ձեռնադրութեամբ տուել եմ Հայոց եկեղեցւոյն 11 վարդապետ, 107 քահանայ, 12 սարկաւագ և 56 չորս աստիճանաւոր դպիր, ընդ ամենն 186 եկեղեցական պաշտօնեայ, որոց ձեռնադրութեան միջոցին միշտ յիշել եմ Պօղոս Առաքելոյ այն խօսքերը, որք վերաբերում են եկեղեցական պաշտօնէից ինն դասակարգութեանց, որ ասէ. «Զորս եղ Աստուած յեկեղեցւոջ, այս են. նախ՝ զԱռաքեալս, երկրորդ՝ զՄարգարէս, երրորդ՝ զՎարդապետս, ապա՝ Զօրութիւնս, ապա՝ Շնորհս բժշկութեանց, Օգնութիւնս, Վարիչս, Ազգս լեզուաց, Թարգմանութիւնս լեզուաց» և այլն։

«Մի՛թէ ամենեքին Առաքեա՞լք իցեն, միթէ ամենեքին Մարգարէ՞ք իցեն, միթէ ամենեքին վարդապե՞տք իցեն, միթէ ամենեքին շնորհս բժշկութեա՞ն ունիցին, միթէ ամենեքեան ի լեզուս խօսիցեն, միթէ ամենեքեան թարգմանիցեն». Ա. Կորնթ. ԺԲ. 28,29 և 30 և Եփես. Դ. 11։ Եւս և թէ. «Այլ ի տան Մեծի ո՛չ են միայն անօթք ոսկեղէնք և արծաթեղէնք, այլ և խեցեղէնք և փայտեղէնք». Տիմօթ. Բ. 20 են։

Այլ և յընթացս 24 ամաց, հրամանաւ Սինոդի օծել եմ զանազան տեղերում 27 եկեղեցիք, ի թիւս որոց և Սաղիանի